հեկան է տալիս եւ երկու ժամ ստանում. Զուսենց Դեղը նոյնպէս երկու ժամ ստանում (Ցաւել. Ա. 99, պատկ. 139)։ Սարու ոմն տալիս է 40 դահեկան եւ երկու ժամ ստանում. Ոսկին, Հաւրքուրը, Մանուչը քսան քսան դահեկան են տալիս և մի մի ժամ ստանում (Ցաւել. Ա. 103)։ Արեւելեան պատի երկու խորշերի մէջ արձանագրութիւնների բեկորներ կան, նորոգութեան ժամանակ պատերի մէջ հագցրած, որոնցից երկուսը իմաստ ունին. Մամխաթուն եւ Ներսէս որդի Ովանիսի մի մի ժամ են ստանում, առաջինը 20 դահեկան տալով, իսկ երկրորդը միայն ընծայ (Ցաւել. Ա. 104)։

Իւանէի տիրապետութեան և գերիշխանութեան տակ(*)։ Ազատ գետի հովիտը Իւանէի իշխանութեան մէջն էր մտնում Այրի վանքի հետ։ Իւանէի մի ընդարձակ արձանագրութիւն աւելի եւս պարզում է խնդիրը (Ցաւել. Ա. 4, պատկ. 142). արձանագրութիւնը տարաբաղդաբար անաղարտ չէ հասել մեզ. նորոգութեան ժամանակ իւր տեղում չեն հագցրած որոշ մասեր, այլ Խորինշահի արձանագրութեան տակ, որով և առաջին տողերից որոշ բառեր պակաս են և մենք լրացնում ենք անկիւնաւոր փակագծի մէջ դնելով։ Արձանագրութիւնը թուական չունի, բայց դժուար չէ որոշել մօտաւոր ժամանակը. արձանագրութիւնը,



Պատկեր 142.

Այս և մնացած արձանագրութիւններից, որ կը բերենք, պարզ է, որ Զաքարեանները տաճարի շինութեան, ինչպէս և ժամատան, մասնակից չեն անմիջապէս, թէև 1200 թուականից արդէն վանքը նրանց իշխանութեան մէջ էր, աւելի ճիշդ Իւանէի։ Մենք առիթ ենք ունեցել պարզելու, որ Զաքարեանց տիրապետութեամբ արեւելեան Հայաստանը երկու մասի էր բաժանուած երկու եղբայրների և ապա նրանց որդիների գերիշխանութեան տակ. Լոռիի և Անիի շրջանները, Արագածոտն մինչև Երասխ՝ Զաքարիա մեծի և նորա որդի Շահնշահի տիրապետութեան և գերիշխանութեան տակ էր, իսկ Աղստեւի գետից սկսած, Բջնիի և Գեղարքունեաց, Վայոց ձորի, Արցախի մի կարևոր մասի և Սիւնեաց գաւառներով մինչև Երասխ՝ թէև գրուած է «աթաբակ Իւանէի եւ արեան հարազատի իւրոյ տիեզերակալին Զաքարիայի» անունով, բայց անկասկած է, որ Զաքարիան վախճանուած էր արդէն (* 1212). արձանագրութիւնների մէջ յաճախ են պատահում այդպիսի երեւոյթներ. ննջեցեալների անունով հարազատները կարգադրութիւն են անում կամ նրան յիշատակում որպէս մասնակից կատարուած կարգադրութեան. օրինակ հէնց նոյն Իւանէի արձանագրութիւնը Հաղարծնի վանքում նման բովանդակութեամբ, ուր յիշուած է Զաքարիայի մահը(**). հէնց այստեղ, Աստուածածնի այրի պատին՝

(*) Մեր Խաղբակեանք Ա. 16-17։
(**) Ջալ. Ա. 31։ Բարխ. Արցախ, 366։